ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 388 -Ա

„25" նոյեմբերի 2024թ.

ք.Արտաշատ

ՀՈՎՍԵՓ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ «ՋՐԱՇԵՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129–Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 85-րդ կետով , հիմք ընդունելով 2024 թվականի նոյեմբերի 21-ի Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Ջրաշենի առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի թիվ 3 որոշումը և Հովսեփ Խաչատուրի Այվազյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հովսեփ Խաչատուրի Այվազյանին 2024 թվականի նոյեմբերի 25-ից ազատել «Ջրաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն » պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի պարտականություններից և լուծել նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

2" Հովսեփ Խաչատուրի Այվազյանին 2024 թվականի նոյեմբերի 25-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Ջրաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն » պետական ոչ

առևտրային կազմակերպության տնօրեն և կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

25.11.2024

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**